

«Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 12, Ասորական աղբյուրներ, Բ, Անանուն Եդեսացի, Ժամանակագրություն», քաղվածությունը բնագրից, առաջարկ և ծանոթագրություններ Լ. Հ. Տեր-Պետրոսյանի, ՀՄՄՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1982, 265 էջ:

Սովետական պատմագիտության մեջ ասորական աղբյուրների գնահատման ու արժեքավորման գեղեցիկ ավանդույթը, որ սկիզբ է առել հատկապես Ն. Պիգուլևսկայայի ջանքերով, այսօր շարունակվում է նաև մեզ մոտ՝ հուրախություն հայ պատմաբանների և Հայաստանի ու նրա հարևան ժողովուրդների միջնադարյան պատմությամբ հետաքրքրվողների: Որպես այդ ավանդույթի շարունակություն, Լ. Տեր-Պետրոսյանի աշխատասիրությամբ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարով լույս է տեսել ասորական աղբյուրների Բ հատորը՝ XIII դ. ասորի պատմիչ Անանուն Եդեսացու «Ժամանակագրությունը», հայերեն թարգմանությամբ, ուսումնասիրությամբ ու ծանոթագրություններով:

Այդ «Ժամանակագրություն» ասորական այլ տիեզերական պատմությունների նման սկսվում է Ադամից ու Եվայից՝ հասնելով մինչև 1230-ական թվականները: Դրանում հայերի ու Հայաստանի մասին եղած տեղեկությունները վերաբերում են տարբեր դարերի և ցրված են զանազան գլուխներում: Նկատի ունենալով, որ հայագիտության համար առանձին նշանակություն ունի «Ժամանակագրության» մասնավանդ վերջին երկու հարյուր տարիների պատմությունը, Լ. Տեր-Պետրոսյանը ճիշտ է վարվել, որ այդ բաժինն ամբողջությամբ թարգմանել է, իսկ մնացածից, որպես հավելված, տվել է միայն Հայաստանին ու հայերին վերաբերող հատվածները: Դրանք ընդգրկում են սելջուկյան նվաճումների և Մերձավոր արևելքում թուրքական ամիրայությունների հիմնադրման՝ այսինքն XI դ. երկրորդ կեսից մինչև XIII դ. առաջին քառորդի պատմությունը, որի մեջ հավասարապես արտացոլվել են նաև խաչակրաց արշավանքների ու Ասորիքի խաչակրաց պետությունների կազմավորման հետ կապված եղելությունները: «Այդ հիմնական իրադարձությունների պատմագիտական իմաստալորման խնդրում,— գրում է Լ. Տեր-Պետրոսյանը,— հնարավոր է, որ «Ժամանակագրությունը» որևէ նորություն չբերի, սակայն անգնահատելի է նրա նշանակությունը բազմաթիվ մանրամասների, դեպքերի, ժամանակագրական տվյալների ու պատմական անձանց ճշգրտման գործում» (էջ 14): Եվ, ընդհանրապես, այլ ժողովուրդների պատմությանն ասորի պատմիչների մատուցած ծառայությունը ոչ միայն նման մանրամասների ճշգրտումների մեջ է, այլև եզակի նշանակություն ունեցող այն վկայությունների ու նկարագրությունների, որոնք չեն պահպանվել օտար այլ աղբյուրներում: Ժիշտ է, ասորի պատմիչներն իրենց տիեզերական պատմությունները շարադրելիս օգտվել են նախորդ պատմիչների գործերից և շատ անգամ նույնիսկ բառացի ընդօրինակել են դրանք, բայց նման դեպքերում էլ, ինչպես նշում է Լ. Հ. Տեր-Պետրոսյանը, ասորական այս աղբյուրները չեն կորցնում իրենց նշանակությունը, որովհետև այդ պատմիչներից շատերի գործերը մեզ չեն հասել, և մենք հետագա այդ ընդօրինակությունների շնորհիվ է, որ իմանում ենք այդ գործերի և հաղորդումների մասին: Գնահատելով ասորական աղբյուրների այս արժանիքները, շեշտը պետք է դնել յուրաքանչյուր ասորի պատմիչի աշխատության այն բաժնի վրա, որը կապվում է նրա կամ նախորդող ժամանակաշրջանի պատմության հետ: Դա բացառվում է նրանով, որ ասորական պատմիչներն իրենց պատմության այդ ժամանակաշրջանը շարադրել են ոչ միայն որպես ականատես ու ականջալուր, այլև օգտվել են նշանավոր անձանց վկայություններից, արխիվներից, փաստաթղթերից, ձեռագրերից ու դրանցում պահպանված հիշատակարաններից, եկեղեցական մատյաններից: Դա վստահելի է դարձնում աղբյուրների հավաստիությունը և մեծացնում դրանց արժանիքը:

Ինչպես Շիրտ նկատել է Լ. Տեր-Պետրոսյանը, ասորական աղբյուրները բյուզանդականի ու մահմեդականի նկատմամբ ունեն մի առավելություն ևս՝ դա նրանց անաշատությունն է, Հասկանալի է, որ բյուզանդացի և մահմեդական պատմիչներն իրենց երկիրը շարագրելիս, բնականաբար, հիմնականում ամեն ինչ լուսաբանել են իրենց հրկրի քաղաքական շահերի դիրքերից, մինչդեռ վաղ դարերից պետականությունն ու քաղաքական ինքնորոշվածությունը կորցրած ասորիները, որոնց ժողովուրդը միշտ էլ սեփական մաշկի վրա զգացել է նվաճող մեծ պետությունների տիրապետության ծանր հետևանքները, իրադարձությունները ներկայացրել են անաշատ դիրքերից: Այդպիսի պատմիչ է նաև Անանուն Եղեմացին: Անդրադառնալով ասորի այս պատմիչի քաղաքական դիրքորոշման հարցին, Լ. Տեր-Պետրոսյանը ցույց է տվել, որ մասնագետներից ոմանք Անանուն Եղեմացու լախատության մեջ տեսնում են բյուզանդացիների նկատմամբ անբարյացակամություն, այսինքն հակաբյուզանդական տրամադրություններ: Ուրիշները նրա երկում գտնում են հակահայկական կողմնորոշում, իսկ ոմանք էլ նույնն են այնգում ֆրանկների կամ մահմեդականների կապակցությամբ: Լ. Տեր-Պետրոսյանն այս տեսակետները մեկտեղելով քննելուց հետո ճիշտ եզրակացրել է, որ Անանուն Եղեմացին որևէ որոշակի կողմնորոշում չի ցուցաբերում: Դա բացատրվում է նրանով, որ, աուորիները վաղուց արդեն քաղաքական նպատակներ չէին հետապնդում՝ հանդես գալով միայն որպես առանձին կրոնական համայնք: Նրանց համար դրական էր այն տիրակալը, որը կարողանում էր ապահովել Լեզիկի խաղաղ կյանքը և չէր դիպչում Հակոբիկյան եկեղեցու շահերին՝ լինել դա հայ, ֆրանկ, թե թուրք՝ միևնույն է: Մեր հեղինակը ևս Եղեմացիի և ընդհանրապես Ասորիքի պատմական իրադարձությունները պնդատում է հիմնականում այս չափանիշով (էջ 25):

Անանուն Եղեմացին իր «Ժամանակագրություն» մեջ հայերի մասին ունի և՛ դրական, և՛ բացասական արտահայտություններ կամ դեպքերի նկարագրություններ: Ռ. Դրուսեն, հիմնվելով այդ բացասական նկարագրությունների վրա, եզրակացրել է, որ Անանուն Եղեմացին հակահայկական դիրքորոշում ունի: Լ. Տեր-Պետրոսյանը, քննելով Ռ. Դրուսենի եզրահանգումը, ապացուցել է, որ դա միակողմանի է և չի արտացոլում ճշմարտությունը: Լ. Տեր-Պետրոսյանը նկատել է, որ «Որպես ազնիվ ժամանակագիր նա չէր կարող կոծկել ուրիշների թերությունները, երբ չի խնայում անգամ իր հայրենակիցներին: Բազմաթիվ դառը խոսքեր, հայհույներ և նզովքներ են ուղղված, օրինակ, ասորի հոգևորականներ Արդուն ավագներից, Բարսուա Իսմայիլի անունով քահանայի և Թեոդորոս բար-Վահրուն եպիսկոպոսի հասցեին» (էջ 20): Եթե նա չի խնայել իր հայրենակիցներին, ապա ինչու՞ պետք է ներքին հայերի այնպիսի արարքները, որոնք իսկապես դատապարտելի էին: Դրա հետ մեկտեղ նա բարձր է դնահատում այն հայերի գործերը, որոնք զովասանքի են արժանի: Անանուն Եղեմացու մոտ ընդհանրապես հայերի ու Հայաստանի մասին տեղեկությունները բազմակողմանի են: Եվ եթե բուն Հայաստանին վերաբերող վկայություններն աղքատ են ու քիչ, ապա Անանուն Եղեմացին քաջատեղյակ է սկսած XI դ. 20-ական թվականներից Ասորիքում և Կիլիկիայում տեղի ունեցած իրադարձություններին, երբ հայ ժողովրդի մի զգալի մասը սելջուկյան արշավանքների կործանարար ավերածությունների ու քաղաքական ծանր պայմանների հետևանքով լքում է հայրենիքն ու գաղթում Հյուսիսային Ասորիքի և Կիլիկիայի անմատչելի գավառները: Հետազոտվում, հատկապես Մանադլիքտի 1071 թ. ճակատամարտից հետո, երբ բյուզանդացիները շախշախիչ պարտություն կրեցին, հայ իշխանական տներին հաջողվեց այս նոր ընկալվածքների տերը դառնալ: Անանուն Եղեմացին այս հայ իշխանական տների, սելջուկների և ապա Մերձավոր արևելքի երկրներն արշաված խաչակիրների փոխհարաբերությունների մասին շատ արժեքավոր մանրամասնություններ է հաղորդել: Նա ցույց է տվել, թե ինչպես սկզբնական շրջանում հայկական այս իշխանական տները մեծ հույսեր էին կապում խաչակրաց արշավանքների հետ և նույնիսկ խաչակիրներին աջակցում: Սակայն ավելի ուշ «մեկը մյուսի ետևից նրանք զոհ գնացին վերջիններիս դավերին ու բռնություններին» (էջ 22):

Քննվող «Ժամանակագրություն» նշանակությունը, ինչպես ցույց է տվել Լ. Տեր-Պետրոսյանը, նաև այն է, որ նա եզակի արժեք ունեցող տեղեկություններ է հաղորդում Կիլիկիայի հայկական պետության, հատկապես Լևոն I իշխանի ժամանակաշրջանի (1129—1137) մասին: Ասորի պատմիչը նկարագրել է, թե ինչպես է Լևոն I-ը կարողացել Դանիշմենդյան ամիրաների, Լրաբեր 6—7

բյուզանդացիների և ֆրանկների բախումների ընթացքում խուսանավելով իր երկրի ու ժողովրդի շահերը պաշտպանել:

Լ. Տեր-Պետրոսյանը մանրամասն վերլուծել է Անանուն Եղեսացու «Ժամանակագրության» պատմագիտական արժանիքները և, ճիշտ գնահատելով դրանք, ցույց տվել այդ աղբյուրի տեղն ու դերը ասորական պատմագրության մեջ: Նա դա կատարել է ամենայն բարեխղճությամբ և գործի նկատմամբ սիրով, որովհետև նման սիրո պիտակցությամբ է միայն հնարավոր հաղթահարել այն մեծ դժվարությունները, որոնք կապված են ասորերեն լեզուների թարգմանության հետ: Լ. Տեր-Պետրոսյանը ոչ միայն սոսկ հաղթահարել, այլև հայ ընթերցողի սեղանին է դրել գիտական բարձր մակարդակով կատարված թարգմանություն, որն արժանի է գնահատանքի ու իրախուսանքի: Լավ կլիներ, սակայն, եթե «Ժամանակագրությունը» թարգմանվեր ամբողջովին:

ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու: